

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N° 2

ԻՆՖՈՐՄԱՏԻՎԱՅԻ և ԿԻՐԱՌԱԿ ԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 30.09.11 ԿԱՅԱՑԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍԻՑ:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՊՀ գիտական խորհրդում ֆակուլտետի ներկայացուցչի ընտրության հարցը
2. Ընթացիկ հարցեր

1-ին հարցի վերաբերյալ

ԼՍԵՑԻՆ - ԵՊՀ գիտական խորհրդում ֆակուլտետի ներկայացուցչի ընտրության հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնի վարիչ, ֆ.մ.գ.դ. պրոֆեսոր Ա.Ալեքսանյանին ընտրել ԵՊՀ գիտական խորհրդի անդամ:

2-րդ հարցի վերաբերյալ

ԻԿՄ ֆակուլտետի դեկան Վ. Դումանյանը ներկաներին տեղեկացրեց, որ 2012-2013 ուստարվանից ֆակուլտետում բացվելու է նոր մասնագիտություն՝ «Մաթեմատիկա, համակարգչային գիտություններ»։ Նոր մասնագիտության համար արդեն մշակվել են ուսումնական պլան, առարկայական ծրագրեր և ֆակուլտետում առկա է պրոֆեսորադասախոսական անձնակազմը, որը կարող է իրականացնել նոր մասնագիտությամբ կրթական ծրագիրը: Համալսարանի գիտական խորհուրդը քննարկել և սովել է իր համաձայնությունը այս հարցի վերաբերյալ:

Ամփոփելով լուծարքների արդյունքները, Վ.Դումանյանը նշեց, որ անբավարար ստացած ուսանողների քանակը բավականաչափ մեծ է համալսարանի այլ ֆակուլտետների հետ համեմատած և առաջարկեց կիսամյակի ընթացքում առավել ինտենսիվ աշխատել ոչ բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների հետ, որը կնպաստի ուսման առաջադիմության բարձրացմանը:

Գիտական խորհրդի քարտուղար Է.Դանոյան